

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

ՄԱՅԻՍ

ՀԻՄՆԱԿԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուլղի. կես տարվանը 6 բուլղի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւններ համար վճարում են
խմբագրութիւնը տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

Երեքշաբթի, մայիսի 31 րէ

ԵԱԳՕՐ ԻԱԶՍՏՐԵԱՆ ՆԱԹԻԿԵԱՆԻ

մահվան քառասունը և առիթով տեղի է ունենալու հոգեհանգիստ Մողղու ս. Գէորգ եկեղեցում, առաւօտեան ժամը 10¹/₂ րէ, որի համար խնդրում են բարեկամներին և ծանօթներին, ամուսինը՝ Մարիամ Տէր-Մարտիրոսեան Նաթիկեանը, զորանք Նաւաթա Կարամանեան Վանեանց, եղբայրը՝ Բաղդասար Նաչատրեանը, իր կին վարվառա ճագորեանը, իր որդի Նաչատր Բաղդասարեան Նաթիկեանցը և քոյրերը՝ Նեֆեմիս Նրիստաֆօրեան Մէլիք Սահակեանցը և Նունէ Նաչատրեան Մարգարեանցը:

ԲՈՎԱՆԻՍՏԻԿՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւններ. — ԵՆՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գործերի դրութիւնը Երևանի նահանգում. Մամուլ. Իմ տեսածն ու լսածը. Նամակ Դարբասեանցի. Ներքին լուրեր. — ՀՅԻՄՆԱԿԻՆ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երևանի նահանգից ստացած տեղեկութիւնները հաղորդում են, որ Երևան և Նախիջևան քաղաքում արտաքին խաղաղութիւն է տիրում, իսկ գաւառների գաւառական մասերում յուզումները դեռ չեն դադարել: Դարբասեանցի գիւղերը ընդհանրապէս մարդկային զոհեր քիչ են տուել, բայց կորցրել են իրանց տնային անասունները մի մասը: Երևանի շրջակայքում գտնվող թուրք գիւղերը յուզված վիճակի մէջ են. բայց չեն վստահանում յարձակողական համարձակ քայլեր անել, որովհետև նրանց վրա ծանր են ազդել Երևանի դէպքերը և երկիւղ են կրում հետևանքներից:

Թիֆլիսի մէջ կազմված խառն յանձնաժողովը, քննութեան ենթարկելով վերջին դէպքերը, որոնց չը բաւականանալ հսկողութիւն կարգելով քաղաքի գանազան մասերի վրա, այլ և հրատարակել մի յատուկ կոչ տեղական լեզուներով, հրահրելով ազգերին համերաշխ և հաշտ կենակցութեան: Յանձնաժողովը անհրաժեշտ համարեց հեռագրել միւս քաղաքների ազգեցիկ անձանց, որ Թիֆլիսի մասին տարածված անհանգստացող լուրերը անհիմն են: Ինչպէս յայտնի է, խառնութեանը վերջին ժամանակներս դժգոհութեան էին յայտնել տնտեսների դէմ: Յանկանում էին վարձագիրներ իջեցնել: Այդ դժգոհութեան պատճառով մայիսի 27-ին նրանք փակեցին խանութները: Քաղաքում յանկարծ յուր տարածվեց, որ իբր թէ հայերի և թուրքերի մէջ ծագել են խլրտուկներ և թէ և շուտով պարզվեց, որ լուրերը սխալ են, բայց և այնպէս յուզումները բաւական մեծ էր և կարող էր հաղորդվել ուրիշ քաղաքներ երկաթուղով ճանապարհորդողների միջոցով: Ուստի յանձնաժողովը վճռեց հեռագրով առաջն առնել թիւրքացութիւնների և սխալ հաղորդութիւնների:

Թիֆլիսից դէպի Նախիջևան ճանապարհ ընկաւ երիտասարդների մի խումբ, որոնք պէտք է զբաղվին հացի, հագուստեղէնի հայթայթման, այլ և բժշկական օգնութեան գործով:

Երևանի մեր թղթակից — Դո յանձնել է պատին մայիսի 26-ին հետեւալ հաղորդագրութիւնը:

Գիշերը անցաւ խաղաղ, գերեզմանային լուրերը միմիայն մի երկու անգամ խանգարվեց և այն էլ հրացանային այս և այն տեղից միմեանց արձագանք տուող թնթիւն պայթուցիկներից:

Առաւօտեան ծագող արեգակի հետ նորից փողոցները լցվեցին հայերով: Որը դուրս է եկել այսպէս կամ այնպէս միս, որը մի ուրիշ մթերք ձեռք ձգելու: Բայց էր զուր: Որն էլ հետաքրքիր հայացքով փողոց է ձգել իրան գիշերվայ անցքերից տեղեկութիւններ իմանալու:

Շուկան դարձեալ մեռած է, մեռած բառի բուն նշանակութեամբ: Թուրք ոչ մի հատ չը կայ: Եւ եթէ մէկ-մէկ թուրքեր դուրս են գալիս, այն էլ շատ կարճ ժամանակով, ուղեկից ունենալով մէկ կամ երկու պահապան զինուորներ:

Շատ թէ քիչ ճարվում է հաց: Ուրիշ մթերքներ բոլորովին չը կան: Յարաբերութիւնը գաւառի հետ միանգամայն ընդհատված է: Եթէ կերական մթերքներ չը գոյութիւնը բացարձակ է հայերի մէջ, հասկանալի թէ ինչ կը լինի թուրքերի դրութիւնը, որոնք երբորդ օրն է ինչ տանից դուրս չեն գալիս և կարծէք կատարեալ պաշարման վիճակի մէջ լինեն:

Այսօր յայտնի եղաւ, որ մի քանի խառնութեան կողմից փորձ է եղել: Բացել են ալիւրավաճառ Յ. Դանդեանի և Յ. Մէլիք-Դադայեանի խանութները և տարել մէջօրեանով բաւականաչափ ալիւր. ալիւրներից մի մէջօր ընկած է եղել ճանապարհին: Շուկան պահպանվում է զինուորներով և յանկարծ խանութներ են բացվում և դատարկվում: Այս բանը մի փոքր իրարանցում առաջ բերեց:

Հայ վաճառականները դիմեցին գինեբաւ Շվիդովին, որը և գնաց գողութիւնների տեղը: Ալիւրը տարած հացավաճառը յայտնի է և պոլիցիան յայտնել է, որ ալիւրի արժէքը կը ստացվի և տէրերին կը յանձնվի, ինչ էլ որ լինի անհասկանալի է մնում թէ ինչպէս առանց խանութատիրոջ բացվում են խանութները:

Այսօր նահանգապետի մօտ ժողով կար յայտնի հայերի և թուրքերի մասնակցութեամբ: Ժողովում որոշվել է վաղը երկու կողմից հրաւիրել մարզիկ, գնալ և բանալ առայժմ հացավաճառների և մասվաճառների խանութները, ի հարկէ պահապան զինուորների հսկողութեամբ, իսկ շաբաթ օր շուկայում խմբի ժողովովին և այդպիսով առաջացնել փոխադարձ վստահութիւն, այլապէս ոչ ոք չի ուզում խանութի մօտենալ, մանաւանդ թարմ է բոլորի մէջ Նախիջևանի ողբերգութեան յիշողութիւնը:

Այդ ժողովում տեղի է ունեցել մի երկու անախորժ բան: Նախ մի խան փորձել է այս կոտորածների մեղքը զցել հայերի վրա յայտնելով, որ իբր հայերը հարբեցրել են այն թուրքին դիտմամբ, որը կովկով կառապանի հետ եղել է կոտորածի սկզբնապատճառ: Ի հարկէ այդ մեղադրութիւնը ծիծաղ է առաջացրել, որովհետև այժմ երկու կողմերի ներկայացուցիչները ստորագրութեամբ կայ մի վաւերաթուղթ, որ թուրքերն են եղել պատճառը կոտորածի: Յայտնի է և այն, որ առաջին օրվայ սպանվածներից և վերաւորվածներից 19 հայ են եղել: Մէկ ասորի և մէկ հրէայ ընդունվել են հայի տեղ և միմիայն երկու թուրք վերաւորներ են եղել, սակայն որոնց մասին ասում են, որ նրանք էլ հաւանքեղ թուրքերի գնդակներից խլված լինեն:

Այս անգամ տեղագրութիւնից յետոյ թուրքերի կողմից առաջարկութիւն է լինում Երևանից գաղթեցնել զէպի հետո տեղեր գաղթականներին, մասնացոյց աւելնել, որ նրանք են այս չարիքների

ստեղծողը: Նահանգապետը պատասխանել է. «Ես ինչ իրաւունք ունեմ արքունի մի մեծ թիւ ընտանիքներ, երբ նրանք բարձրագոյն հրամանով իրաւունք են ստացել այստեղ ապրելու. առէք դուք նրանցից չարագործների անունները և ես պատրաստ եմ նրանց ամենախիստ պատիժների ենթարկելու»:

Եւ այս առաջարկութիւնը արվում է այն ժողովրդի ներկայացուցիչների կողմից, որը եղել է այս թշուառութիւնների պատճառը և որը մէջ այս աղմուկները թելադրող է առաջացնող անձնաւորութիւնները յայտնի են իւրաքանչիւր հայի և թուրքի: Տուէք արդարադատութեան ձեռքը, թուրք հասարակութեան ներկայացուցիչներ, այդ խռովարարներին և հաւատացած եղէք, որ հայը անտեղի, առանց առիթի չի թափի թուրքի և ոչ մի կաթիլ արիւնը:

Այսօր հրացանաձուլութիւնը դադարել է, երբեք երբեք այս և այն տեղից պայթում են հրացաններ: Սպանութեան դէպքեր տեղի են ունեցել, բայց թէ որքան, յայտնի չէ: Քաղաքի դրութիւնը այնպէս է, որ զոհերի թիւը կարծէք այնքան էլ չէ հետաքրքրում:

Այսօր առաւօտեանից սկսած ամբողջ օրը հայոց թաղից թուրքեր ամբողջ ընտանիքներով և տան կահկարասիներով տեղափոխվում են թուրքերի թաղը: Այդ տեղափոխութեան հսկողութեան և պահպանութեան համար նշանակված են բաւականաչափ կազակներ և զինուորներ: Տեղ-տեղ նկատելի են նաև հայ ընտանիքների տեղափոխութիւններ:

Երևանից, մայիսի 28-ին, 10 ժամ 36 րոպէին կէսօրից յետոյ ստացանք հետեւալ հեռագրերը:

Ստոպեցի, որ առաջին օրը հայերից սպանվել են ութ մարդ, իսկ վերաւորվել են տասներեք մարդ: Սահմեղականների տուած զոհերը կրկնակի են: Հայերի տուած զոհերի բազմաթիւ լինելը բացատրվում է նրանով, որ թուրքերը անսպասելի կերպով համարեա միաժամանակ յարձակում գործեցին զանազան կէտերի վրա:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐՈՒԾՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱԶԱՆԳՈՒՄ

(Գաղտնական)

Հեռագրական տեղեկութիւնների հիման վրա Երևան քաղաքում մայիսի 24-ին հրացանաձուլութիւնը վերսկսվեց, մերթ ընդհատվելով, զորքեր երևացած ժամանակ, մերթ վերսկսվելով՝ նրանց անցնելուց յետոյ: Բոլոր խանութները փակ էին: Մի մանրածախսի խանութ կողոպուտի ենթարկվեց: Նահանգապետն անձամբ գտաւ կողոպուտի հետքը մինչև պարահագաթակ թուրքերով բնակված քաղաքանսարայը. ապրանքի մի մասը գտնվեց, իսկ մնացած մասը շարունակում են որոնել: 23-ի երեկոյան վերաւորների թիւը հասնում էր 22-ի: Մայիսի 26-ին Երևանում արտաքին խաղաղութիւն էր, բայց տրամադրութիւնը շարունակում էր լինել ծայրայեղ անհանգիստ:

Շարուր. Դարբասեանցի գաւառի լեռնային մասում էլ դրութիւնը շարունակում է անհանգիստ լինել:

Ղաւարու գիւղում մայիսի 25-ին առեւտրականները բոլոր ապրանքները տարան իրանց տները: Գիշերը մահադականները մեծ մասը գնաց գիւղերը, ուր սկսվեց հրացանաձուլութիւն:

Որովհետև տեղեկութիւններ էին ստացվել, որ մահադականները յարձակվել են Քեալալի գիւղի վրա (Երևանի գաւառ) և որովհետև բացակայ են թէ Երևանի գաւառապետը, թէ

նրա օգնականը, որոնք ուղարկված են գաւառի ուրիշ կէտերը, — էջմիածնի գաւառապետին հրամայվեց մեկնել Քեալալի կազակների կօմանդայով:

Նկատվում են խիստ յաճախակի թաւաններ ճանապարհների վրա, մանաւանդ Նախիջևանի ճանապարհին: Զուլֆայի գծի վրա շարժումը դադարել է, Արփաչայի գետի վրայի կամուրջը ջրից փչացած լինելու պատճառով:

Ընդհանրապէս Երևանի նահանգում դրութիւնը անհանգիստ է: Այնտեղի զօրքերն ու ժեղացիները համար ուղարկվում են նոր դժուարմանը: (ԿԱՅԿԱՅԷ):

ՄԱՍՈՒԼ

Ռուսաց նաւատորմի խորաւանդ օրվայ այն սարսափելի աղէտն է, որ կաշկանդել է լրագրութեան ամբողջ միտքն ու ուշիւր: Համաշխարհային մամուլը այդ անօրինակի դժբախտութեամբ է զբաղված: Հասկանալի է որ ամենից շատ յուզված պիտի լինի ռուս հրապարակաբանութիւնը: Ամեն օր հարիւրաւոր եղանակով ու ձևով նա վերադառնում է Կոստանի նեղուցի աղետին, որպէս է այդ զարհուրելի հարուածը, կոչել է անում, վշտի հատաչանքներ է արձակում: Բոլոր հարցերը յիտ են քաշվել, երկրորդական տեղ բռնել: Նոյն իսկ մեր կովկասեան զարհուրելի դժբախտութիւնը — արհիւտա օրերը Նախիջևանում և Երևանում չեն կարողանում ուղարկութիւն գրանել այն խոր սուգի մէջ, որ պատել է ռուսաց մամուլը: Մենք, կովկասցիներս էլ, այնքան ցնցված ու շքած ենք մեր մէջ կատարվող վայրենի իրողութիւններից, այնքան սարսափի ու դայրութի ազդեցութեան տակ ենք, որ հեռուոր Արեւելքում կատարված պատմական ահաբեկ երևոյթ մեզ համար կարծես այնքան մեծ, խոշոր նշանակութեան չունեցաւ: Փորձենք մի քանի նմուշներով ցոյց տալ մեր ընթերցողներին թէ ինչ տրամադրութիւն է տիրում ռուսաց մամուլի մէջ: Եւ առաջին խօսքը տանք... Սուվօբինին, ռուսական շովինիզմի այդ ծայրայեղ ներկայացուցիչն, որ ներկայ պատերազմի կողմնակիցներից և փառաբանողներից մէկն էր:

Այն, — ասում է ծերունին, — դառն և աղետալ է մեզ ամենքին համար: Մարդ չը կայ, տաղանդաւոր մարդիկ, փրկութիւն չը կայ: Շտապեցէք ծուկի չոքել: Այդպէս մի արեք: Դուք այդպէս ասում էք այն պատճառով, որ կարծում էք թէ խելքի և շնորհքի ամբողջ նիւթը միայն միմիայններին, կառավարիչներին, պետական խորհրդի ծերերի մէջ է: Եթէ այդպէս է, ուրեմն չը կայ փրկութիւն: Բայց կայ այդ փրկութիւնը և նա թարմ մարդկանց մէջ է, առողջ հոգիների մէջ, որոնք յիշում են իրանց ոգին, իրանց նախապաշարների հոգին և իրանց պատմութեան փառաւոր էջերը: Յուսահատութիւնը — մահ է, ստորացումը — մարդի սարկութիւն: Ձեռքից մի տաք անտուղ կարևորութիւն ունեցող վարկեանը, աշխատեցէք որ Ձեմակի Սօթը բացվի, որ Պետերբուրգ հաւաքվին լաւագոյն մարդիկ ընդհանուր խորհրդակցութեան, ընդհանուր գործի: Եթէ ես որոտներ ունենայի ձեռքումս, հարուածներով կը դրդացնէի ամբողջ Ռուսաստանը: Բայց իմ հին, տանջված սրտի վերջին արեւնով ես կանչում եմ. ժողովեցէք Ձեմակի Սօթը, հրաւիրեցէք երկրի ներկայացուցիչներին այնպապ, չը յետաձգելով, չը վախկնալով: Յիշեցէք — համարձակներին Աստուած է օգնում:

«Речь» լրագիրը գրում է.

Բժշկականի մղած օրհասական կուրի նպատակը ծովի վրա գերակշռութեան ձեռք բերելու հարցն էր, այս հարցը յօշուտ մեր չը վճռվեց և նորից վճռելու համար, աւաղ, մենք առ այժմ բաւականաչափ ոյժեր չունենք: Բայց պէտք է որ մենք, ուրեմն, ոյժեր հաւաքենք միայն նոր պատերազմական ձեռնարկութիւնների համար: Հոգ տանենք միայն այն մասին, որ կոտորենք հակառակորդի պատերազմական ոյժը:

Կարծում ենք, հաւատում ենք, պնդում ենք — ո՛չ, ո՛չ, ո՛չ:

«Русская Газета» լրագիրը. Փորձութիւնների այս օրերում տկամայ ախանջ ես գնում թէ քաղաքականներ և թէ

This image shows a blank, aged, cream-colored page, likely an endpaper or flyleaf of a book. The paper has a slightly textured appearance with some minor creases and discoloration, characteristic of old paper. The left edge of the page is bound, and the overall tone is a warm, off-white or light beige.